ՀՏԴ 929:891.981.09 Սարինյան + 800

Doi:10.54503/0135-0536-2024.3-254

# ՍԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ
## (Ծննդյան 100-ամյակի առթիվ)*

*Լրացավ ականավոր գրականագետ-քննադատ, ակադեմիկոս Սերգեյ Ներսեսի Սարինյանի ծննդյան 100-ամյակը:*



*Սերգեյ Սարինյանն անցյալ դարի 50-ական թվականներին ասպարեզ եկած գրականագետ-քննադատների սերնդի ակնառու ներկայացուցիչներից էր, ում կյանքն ու գործն ամբողջապես նույնացավ այդ սերնդի պատմությանը: Սերնդային որոնումների ու հայտնության ընդհանուր համարժեքի մեջ նա փորձեց ներդնել երկու դարերի հայոց գրականության էջերի գեղագիտական-փիլիսոփայական իր մեկնությունները, որոնք հասցրեց ամփոփել գրականության պատմության և տեսության, գրական դպրոցների, գրականագիտության մեթոդաբանության, գրականության պարբերացման հարցերին, առանձին դասական գրողների ստեղծագործությանը նվիրված իր գրականագիտական ժառանգության վեց հատորների մեջ (1988–2015 թթ.): Ժամանակի առանձնահատկություններից ելնելով՝ սերնդի գիտական որոնումները հետամուտ էին մինչ այդ հաստատուն թվացող արժեքների վերագնահատմանը, ինչը ենթադրում էր գիտական նյութի քննություն ոչ միայն պատմական, այլև արդիական հայեցակետերից, այլ խոսքով՝ գրականագիտության և քննադատության մեթոդաբանական ընդհանրություն, որի «հիմքը գիտականությունն է»[1]:*

*Ծնվել է 1924 թ. հունվարի 17-ին ԼՂԻՄ-ի Ստեփանակերտի (ԼՂՀ Ասկերանի) շրջանի Սեյտիշեն (Խաչեն) գյուղում: Միջնակարգ կրթությունն ավարտելուց հետո՝ 1941–1942-ին, 1944 թթ. ուսուցչություն է արել տեղի միջնակարգ դպրոցում: 1942–1943 թթ. մասնակցել է ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված թեժ մարտերին: Վիրավորվել է, պարգևատրվել Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով: 1949 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1952 թվականից, աշխատանքի է անցել նույն*

---

* Ներկայացվել է 11. X. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

[1] Ս. Սարինյան. Հայոց գրականության երկու դարը, գիրք առաջին, Երևան, 1988, էջ 3:

*ինստիտուտում: Այնուհետև նրա ամբողջ երկարամյա՝ ավելի քան վեց տասնամյակ ընդգրկող գրական-գիտական կենսագրությունն անցել է Գրականության ինստիտուտի պատերի ներքո (1952–1958 թթ.՝ գիտաշխատող, 1958–1960 թթ.՝ ավագ գիտաշխատող, 1960 թ.՝ հայ նոր գրականության բաժնի վարիչ): 2000–2004 թթ. եղել է գրականության մասնագիտության գծով գիտական աստիճաններ շնորհող գիտական խորհրդի նախագահը: 1953 թ. պաշտպանել է գիտական թեզ՝ «Քննադատական ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի, իսկ 1967 թ.՝ «Հայկական ռոմանտիզմ» հիմնարար մենագրության համար՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Գիտական նշանակալից գործունեության համար 1970 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի, 1990 թ.՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամի, 1996 թ.՝ ակադեմիկոսի կոչում:*

*Ս. Սարինյանի գիտական մեծ վաստակն արժանացել է պետական և գրական-մշակութային մի շարք բարձր կոչումների ու պարգևների: Նա ՀԽՍՀ պետական մրցանակի (1980), ՀՀ նախագահի մրցանակի (2005) դափնեկիր էր, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» (2009) և «Մովսես Խորենացի» մեդալակիր (2009), ՀՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանակիր (2004), ՀՀ ԿԳ նախարարության ոսկե մեդալակիր (2004), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1985): Պարգևատրվել է նաև Մ. Նալբանդյանի անվան (1986), Ն. Աղբալյանի անվան (2003), ԼՂՀ կառավարության ու ԼՂՀ ԳՄ Եղիշեի անվան (1999), ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» գրական մրցանակներով:*

*Ինստիտուտում ծավալած գիտական բեղուն աշխատանքի հետ զբաղվել է մանկավարժական ակտիվ գործունեությամբ՝ հանրապետության նոր սերնդի գիտական կադրերի պատրաստմամբ՝ Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում աշխատելով որպես գրականության ամբիոնի վարիչ և դասախոս:*

*Գրականագետի հետաքրքրությունների շրջանակը հենց սկզբից պայմանավորված է եղել իր անհատականության՝ խառնվածքի ու մտածողության առանձնահատկություններով: Դա ամենից առաջ իր ներքին մտավոր-զգացական հնարավորությունների զորեղության գիտակցման վրա հիմնված մեծ ինքնավստահությունն էր: «Ես անհանգիստ ոգի եմ, – խոստովանել է նա, – մի անհասկանալի խզում կա իմ ներքին աշխարհի և արտաքին աշխարհի միջև»: Արտաքին աշխարհի անկատարությունն ու նյութապաշտությունը նրա բնավորությանը հաղորդել են «ներքին խռովք, (...) բնական հոռետեսություն», մեկ այլ կողմով դուռ են բացել նաև գրական կյանքի պրակտիկ հարաբերություններում երբեմն-երբեմն առաջ եկող թյուրըմբռնումների, փոխադարձ անհասկացողության դրսևորումների համար: Բայց հենց դրանք էլ կռել են նրա կամքը, օժտել «մաքառման ներքին մղումով» հայացքն ուղղելով «դեպի վերերը»: Ահա, թե ինչու նրա միտքը մշտապես նպատակամիտված էր դեպի նորը, չպեղված: Ըստ էության, անհատական խառնվածքի այս հատկանիշներն էին ձևավորել մտքի-մտածողության այն քիչ հանդիպող որակը, որը ձգտում էր համակարգվածության, իսկ դա գիտականության նախապայմանն է:*

*Ս. Սարինյանի մտածողության մյուս կարևոր սկզբունքը՝ ռացիոնալիզմն էր, ինչը՝ նրա բնորոշմամբ, ապահովում է հետազոտական մտքի «ազատագրումը էմպիրիզմից և սոցիոլոգիական սխեմատիզմից, նրա տեսադաշտի և աշխարհայացքի ընդլայնումը պատմության, փիլիսոփայության և բնական գիտությունների հետազոտական փորձով»: Մեթոդաբանական նշված դրույթները, իր իսկ խոստովանությամբ, «ուրույն ուղղություն նշանավորեցին հայ*

գրականագիտության պատմության մեջ՝ ակադեմիական դպրոցը»[2], որի հետ և նա կապում էր հայոց գրականագիտական մտքի զարգացման հեռանկարը[3]:

Մեթոդաբանական նշված սկզբունքներով ավելի քան վեց տասնամյակի ընթացքում նա հեղինակել է տեսական, պատմաքննական բնույթի հիմնարար ուսումնասիրություններ, որոնք ամփոփվել են «Հայոց գրականության երկու դարը» (վեց հատորով, 1988–2015), «Հայ գաղափարաբանություն (պատմաքննական տեսություն)» (1998, 2005), «Հայկական ռոմանտիզմ» (1966), «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը» (1973), «Գեղարվեստական գրականության պատմականությունը» (1979), «Հայ ռեալիզմի պատմական ուղին: Հայ ռեալիզմի պատմության և տեսության հարցեր» (1986) և այլ աշխատություններում: Նրա ընդհանուր գիտական ղեկավարությամբ, խմբագրությամբ և մասնակցությամբ են իրականացվել «Հայ նոր գրականության պատմության» հինգ հատորները (1962–1979), «Հայոց գրականության պատմության» երրորդ (2015) և դեռևս չհրապարակված չորրորդ հատորները, «Հայ քննադատության պատմության» երկու հատորները (1985, 1998), «Հայ վեպի պատմություն» հատորը (2005): Տարբեր տարիների լույս տեսած նրա մենագրությունները հայ գրականության դասականների՝ Րաֆֆու (1959, 1985, 2010), Մուրացանի (1976, 2004), Լ. Շանթի (1991), Պ. Սևակի (2006) մասին, աչքի են ընկնում այդ հեղինակների անհատականության և ստեղծագործության տիպաբանական խորքային բացահայտումներով: Ս. Սարինյանի գրչին են պատկանում մի շարք ինքնատիպ գրողների (Ս. Տյուսաբ, Պ. Պռոշյան, Նար-Դոս, Պ. Սևակ) երկերի ժողովածուների, Վ. Տերյանի՝ Լենինգրադում հրատարակված «Стихотворения» (1980) ժողովածուի առաջաբանները, Մոսկվայում լույս տեսած «Армянская литература» դասընթացի «Հայ նոր գրականություն» բաժինը: Անվանի գրականագետն իր ներդրումն է ունեցել նաև «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյակի ստեղծման գործում՝ հեղինակելով երրորդ և հինգերորդ հատորների՝ գրականությանը վերաբերող բաժինները: Մի քանի տասնամյակի ընթացքում ուշի ուշով հետևելով գրական ընթացքի զարգացումներին՝ ունեցել է նաև բազմաթիվ քննադատական ելույթներ, մասնակցել գրական բուռն բանավեճերի, գրել գրախոսականներ, մասնակցել հայոց գրականության դասագրքերի կազմմանը:

Այսօր արդեն հանրագումարի բերելով վաստակաշատ գրականագետի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ կարող ենք ասել, որ Ս. Սարինյանի նպատակը գրականության փիլիսոփայության ըմբռնումն ու բացահայտումն էր, որը մի նոր, ավելի խոր մակարդակի վրա է դնում գրականության երևույթների քննությունը՝ իբրև գիտական հետազոտության առարկա: Նա համոզված էր, որ «Գտնել գրողի մտադրությունը գեղարվեստական երկում, միասնական ելակետի ենթարկել երկի բազմանշանակ պատկերների միացնող օղակները, դիտել այդ ամենը բովանդակության ու ձևի միասնության մեջ՝ այս է գրականագիտության կոմպլեքսային հետազոտության ուղին և դա է, որ գրականագիտությունը բարձրացնում է փիլիսոփայական համադրության»[4]: Շատ տրամաբանական էր Սարինյանի հարցադրումը՝ եթե կա պատ-

---

[2] Այստեղ և հետագա շարադրանքում հեղինակից մեջբերումներում ընդգծումները մերն են:

[3] Ս. Սարինյան, Հայոց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, Երևան, 2004, էջ 543–544:

[4] Ս. Սարինյան. Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 20–21:

*մության փիլիսոփայություն, արվեստի, կրոնի, իրավունքի փիլիսոփայություն, ինչո՞ւ չի կարող լինել գրականության փիլիսոփայություն, որի իրավունքների հաստատմանը նա նվիրել էր վերջին տարիների իր հետազոտական ջանքերը:*

*Ասվածից այլևս պարզ պետք է լինի, որ նման մտածողության տեր հետազոտողը ոչ միայն արժևորելու էր գաղափարի (ըստ նրա, ավելի լայն առումով՝ գաղափարաբանության) առկայությունը գրականության և արվեստի, ազգային ու հասարակական մտքի տիրույթներում,* ստեղծագործական մեթոդի *անհրաժեշտությունը, առանց որի «չի կարող գիտություն լինել», այլև մշտապես գտնվելու էր «մտավորականության* ազատամտական թևի *դիրքերում»*[5]*:*

*Անվանի գիտնականն իր երկարատև ու բեղմնավոր կյանքի ու գործունեության ընթացքում մշտապես պաշտպանել է աշխարհասփյուռ հայությանը համախմբող ազգային գաղափարախոսության, «Մի ազգ – մի եկեղեցի – մի մշակույթ» դրույթի կարևորությունը՝ համոզված լինելով, որ «Հայրենիք – Սփյուռք հարաբերությունը մեր ազգային կացության էական խնդիրներից մեկն է: (...)* Մեր ազգային գոյության ճգտումը միակենտրոնությունն է, *հայության հավաքականությունը, Հայ դատը, հայրենիքի միավորումը և անկախ պետականությունը:* Միակենտրոնության առանցքը Հայաստանն է, որի հանդեպ Սփյուռքը ենթակայական է՝ թե մշակութաբանական և թե ազգայինքաղաքական անհրաժեշտությամբ»[6]:

*Գրական-գիտական որոշ շրջանակներում Ս. Սարինյանի մտածողությունն ու ոճը երբեմն բարդ է համարվել: Սակայն, կարծում ենք, շատ ավելի ճշգրիտ էր Պ. Սևակը, երբ «ի ծնե ակադեմիկոս-գրականագետի» (Հր. Մաթևոսյան) մտածողության եղանակը որակում էր՝ «ըստ հարկի* բարդ, *բայց ոչ երբեք խրթին», ընդգծելով նաև նրա հայացքի թափանցողությունն ու խորքը՝ «Ոմանք (ըստ ծանոթ առածի) ծառերի ետևում չեն տեսնում անտառը, իսկ Սարինյանը գերազանց* անտառատես *է»*[7]*:*

*Ակնհայտ է, որ անհատականության նշված որակները ձեռք էին բերվել գրականագետի տասնամյակների հարուստ փորձով, հայ և համաշխարհային գրական-գիտական, իմաստասիրական մտքի լավագույն ավանդույթների խորքային յուրացմամբ, ինչը և նրա վաստակը բարձրացնում է դասականության աստիճանի:*

ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Պետրոս Դեմիրճյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության, գրականագիտական և գրաքննադատական բազմաթիվ հոդվածների: ORCID:0009-0003-6265-4421. pdemirchyan@mail.ru

[5] *Ս. Սարինյան. Հայոց գրականության երկու դարը, գիրք չորրորդ, էջ 543:*

[6] *Ս. Սարինյան. Հայ գաղափարաբանություն (պատմաքննական տեսություն), Երևան, 1998, էջ 292–293:*

[7] *Ս. Սարինյան. Հայոց գրականության երկու դարը, գիրք երկրորդ, էջ 58:*